

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1931

թիվ 18

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՀԱՒԱՍԱՐԱԿՇՈՒ ԿԵԱՆՔ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀՐԵԱՆՆԵՐԸ

«ԲԱՄ ՓՈՐՈՏԱՆ» ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՏԵՐՈՋԸ ՁԵՌՔԻՆ ՄԷՋ

ՎԵՐ. Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՌԻԹԵԱՆ ՄԷՋ ՀԱՆԴԱՆԱԿԻՆ ԴԻՐՔԸ

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՄԱԿԵԴՈՆԻՈՅ ԵՒ ԹՐԱԿԻՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍԻՆ ԱՅՅ ՊԱՏ. Կ. ՖԱՐԱՃԵԱՆ

ՔԷՍԱՊ ԻՆՋՊԷՍ ՈՐ ԷՐ

ՎԵՐ. ՅԿ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ՀԱՅԵՐ ՀԱՂԷՊԻ ՀՐԻԱՆԴԱՆՈՅՆԵՐՈՒՆ ՄԷՋ

ԹՂԹԱԿԻՅ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՔԱՂԵՑ՝ Հ. ՓՈՂԱՏԵԱՆ

ԱՅԼԵՒԱՅԼ

ՀՐԵԱՆ ԵՒ ԻՐ ՄԱՀԱՄԵՐՁ ԴՈՒՍՏՐԸ

ՆՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ՇԱՀԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱՂԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, քառեկան բաժնեգրին է 150 դրուշ սուրի. Սուրիոյ համար, և մէկ ու կէս տուար՝ սուրի բուր երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն զըրկուիր եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ. չըրատարակուող յօդուածներու համար պէտք է զրկել փոստի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկ էջին վրայ մեկանով, գիրը՝ թիւնի և մաքուր կերպով:

ՀԱԼԷՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐՔԱՐԱՆԻՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ՅԱՆԿ 1930 ՅՈՒՆԻՍ 4-1931 ՅՈՒՆԻՍ 31. Շարունակութիւն.

Պրն. Նորայր Գալանճեան 22 զրշ. (կերպաս), Ճէմալ Սէմի էֆ. 12 զրշ. (կերպաս), Պրն. Արամ Շօրվօղլուեան 40 զրշ. (կերպաս), Պասիլ Ղուկաս էֆ. 30 զրշ. (կերպաս), Հաճի լեւոն Բիւրք-ճիւլեան 20 զրշ. (կերպաս), Պրն. Նօրիս Կիւլէսէրեան 32 զրշ. (կերպաս), Պրն. Մանուէլ խաչատուրեան 20 զրշ. (կերպաս), (Շարունակելի)

McNESS' EFFERVESCENT SALTS

ԿՈՒԶԵՍ

ՅՍՏԱԿ ԳՈՅՆ

ԼԱՒ ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ

ԱՆՑԱԻ ՈՒՂԵՂ

ՄԱՔՈՒՐ ԱՐԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ,

ՊէՏՔ Է ԳՈՐԾԱԾԵՍ Mcness' Effervescent salts ԿՈՉՈՒՍԾ ԱՂԵՐԸ, որ քեզ պիտի ազատէ պնդութենէ: Քանզի յաճախ պնդութիւնն է որ յառաջ կը բերէ գէշ գոյն, անմարսողութիւն, գլխու ցաւեր, ինքնաթուռաւորում և պաղառութիւններ:

Կը գտնուի Տիարք Ն. Իշխանեանի, և Ե. Տայրեանի գեղարանները և Տիար Պէշիւր Բէլէշեանի մօտ:



ՓՈՐՁԷ՛

ՓՈՐՁԷ՛

MCNESS SHAVING CREAM

Ինչո՞ւ կը չարչարես երեսդ երբ կարելի է ածիլուելու գործողութիւնդ չափազանց զիւրացնել: Mcness մօրուք կուղցնող իւզը թող զայն ընէ քեզի համար:

Կը գտնուի բոլոր յայտնի գեղարանները:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1931

ԹԻԻ 18

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՀԱՒԱՍՏԱՐԱԿՇԻՌ ԿԵԱՆՔ

Բառին գիտական և իրական առումով չհենք կրնար ըսել թե հաւասարակշիռ կեանք գոյութիւն ունի: Եթէ այդպէս ըլլար ուէ շարժում չպիտի տեսնուէր կեանքի մէջ: Կատարեալ հաւասարակշիռութիւն անշարժութիւն կը նշանակէ: Կեանքը կը նմանի ժամացոյցի ճօճանակին, որ միշտ աջ և ձախ կը շարժի բայց միշտ յառաջ կ'երթայ: Մարդկային թէ՛ անհատական և թէ՛ հաւաքական կեանքին պատմութեան ընթացքը ուղիղ գիծ մը չի կազմիր. անիկայ մերթ ձախ և մերթ աջ կը շեղի, միեւնոյն ատեն՝ թէպէտ երբեմն զէպի ետ բայց ընդհանուր առումով զէպի յառաջ կը միտի:

Մարդ շատ բնական կերպով կը փորձուի տեսնել մէկ արժէքին մէկ կամ միւս եզրը նկատի առնել, անոր մէկ կամ միւս ծայրը երթալ, յաճախ միւս ծայրը անտեսելով, նոյնիսկ զայն ճշմարտութեան հակառակ նկատելով: Այսպէս՝ մարդը երեւութապէս իրարու հակասական բայց իրականին մէջ իրարու լրացուցիչ եզրեր, ճշմարտութիւններ, զէպքեր, հոսանքներ, դրութիւններ, երանգաւորումներ կը գտնէ: Մարդուն համար տեւական հարց եղած է թէ՞ տէրն է իրականութիւնը կամ իրական արժէքը, — օրէնքը թէ ազատութիւնը, սէրը թէ արդարութիւնը, ըզգացումը թէ իմացականութիւնը, հաւատքը թէ գործը, նիւթը թէ ոգին ևայլն: Տարբեր մարդերու կողմէ,

տարբեր ժամանակներու մէջ ասոնցմէ մէկը կամ միւսը շեշտուած է: Եւ ասիկայ անխուսափելի է սրպէսզի կեանքը շարժի: Բայց թագուն ոյժ մը միշտ մարդկային կեանքը հաւասարակշիռութեան գործողութեան մէջ է, չթողնով որ կեանքին միայն մէկ եզրը շեշտուի և միւսը ճոռացութեան մատնուի:

Քրիստոնէական կեանքի մէջ ալ սակեւ եզրերէն մէկը կամ միւսը տարբեր ժամանակներու մէջ, տարբեր հոսանքներու կամ անհատներու կողմէ փոխի փոխ շեշտուած են, և անոր համեմատ ալ քրիստոնէական կեանքը գոյն և ձև առած է: Այս երկու եզրերն են հաւատք և վարդապետութիւն, այսինքն քրիստոնէական կեանքին մէջ հոգեկան և իմացական տարրերուն բաժինները:

Այս երկուքն ալ անհրաժեշտ են, մէկը առանց միւսին կ'արտադրէ վըտանգաւոր, ախտաւոր երեւոյթ մը: Նոյնիսկ եթէ մէկը կամ միւսը պէտք եղածէն աւելի շեշտուի և անոնց բնականոն համեմատութիւնը աւրուի, և այդ աւրուած համեմատութիւնը տեւական դառնայ, նոյն վտանգաւոր հոգեւոր վիճակը յառաջ կուգայ:

Առանց հաւատքի անկարելի է երեւակայել քրիստոնէական կեանք մը, և առանց պէտք եղած չափով հաւատքի կարելի չէ հռանդուն, կորովի կեանք մը ունենալ: Իսկ առանց իմացականութեան հոգեւոր կեանքը ա-

պահով վիճակի մէջ չի գտնուիր, և ան
ենթակայ է ամէն հովերէ շարժելու և
կործանելու: Ունէ անհատ և ունէ ժո-
ղովուրդ չի կրնար այս երկուքը տեւա-
կանօրէն հաստատակշիռ վիճակի մէջ
պահել, անիկայ մէկէն դէպի միւսը կը
շարժի և պէտք է շարժի: Այս կը նը-
շանակէ թէ անհատական և հաւա-
քական հոգեւոր կեանքի մէջ հաստա-

րակշռումը տեւական գործողութիւն
մըն է, որ մարդը կ'արգելէ մէկ կամ միւս
ծայրայեղութեան երթալէ: Այս կեր-
պով կեանքը փոխն ի փոխ մէկ և միւս,
աջ և ձախ ծայրերը շարժելով, և ոչ
միայն մէկ կողմ շարժելով յառաջ կու-
գայ ասողջ հոգեւոր կեանք մը: Ասոր
համար քրիստոնեան պէտք է արթուն
մնայ աղօթելով:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀՐԵԱՆԵՐԸ

Առաջին քրիստոնեաները գրեթէ բո-
լորովին Հրեաներ էին, որոնք աւետա-
քանի առաջին միսիոնարները եղան և
քրիստոնէութիւնը տարածեցին: Բայց
շատ չանցած քրիստոնէութիւնը եղաւ
ոչ—Հրեաներու, հեթանոս աշխարհի կը-
րօնքը և Հրեաները մնացին Մովսիսական:

Երկու հազար տարիներէ ի վեր հրէ-
ութիւնը քրիստոնէութեան հետ յարա-
բերութիւն ունեցած է միշտ անհաշտ
գիրք մը բռնելով անոր հանդէպ: ԺԹ.
դարուն Հրեաներու համար կազմուած
և անոնց մէջ գործող միսիոնարական
հաստատութիւնները շատ քիչ և յու-
սահատեցուցիչ արդիւնքներ ունեցան:
Եւ սակայն այս բոլոր ջանքերը անզգա-
լարար կը թափանցէին հոգիներու մէջ:

Հրեաներու մէջ սկսաւ ազատական
շարժում մը, որ սկսաւ Յիսուսը նկա-
տելիբր «մեծ մարգարէ մը» և մեծա-
գոյն Հրեայ, «ազգային հերոս մը» ո-
րով Հրեայ ազգը կրնայ պարծենալ: Ա-
զատական Հրեաներու ժողովարաննե-
րուն մէջ լսելի եղան քարոզներ, որոնց
նիւթը Յիսուսի ուսուցումներէն և խօս-
քերէն քաղուած էին: Սակայն ասոնք
կը մերժէին Յիսուսը իբր Աստուծոյ Որ-
դին և Քրիստոս ընդունիլ:

Մեծ Պատերազմի միջոցին և անկէ
ետքը մանաւանդ՝ ուղղափառ, աւան-

դական մովսիսականութեան դէմ դժ-
գոհութիւնը սաստկացաւ ամէն տեղ:
Ո՛չ ազատական սինակովը և ո՛չ հին
ուղղափառ հրեայ կրօնքը գահացում
չէր տար ճշմարտաբաղձ հոգիներու: Եւ
սկսաւ շարժում մը դէպի Քրիստոս:

Վերջին տասը տարուան միջոցին
քրիստոնէութիւնը ընդունող Հրեանե-
րու թիւը, թէ՛ ժողովրդային և թէ՛ մը-
տաւորական դասակարգին մէջ, զգալի
կերպով աւելցաւ Պաղեստինի, Եւրո-
պայի և Մ. Նահանգներու մէջ: Ինը
տարիներէ ի վեր Հունգարիոյ Հրեանե-
րուն մէջ գործող Վեր. Կ. Ճանսըն կը
պատմէ թէ Պաւտափէշթայի Հրեանե-
րուն մէջ 1922 ին կազմուած է ընկերու-
թիւն մը բաղկացած Քրիստոսը փնտռող
հոգիներէ: Ասիկայ թիւով և ազդե-
ցութեամբ այնքան զօրացէր է որ տա-
կաւին իբր քրիստոնեայ չմկրտուած
շատ մը հրեաներ անոր ժողովներուն
կը մասնակցին, Հունգարիոյ և Եւրոպա-
յի զանազան քաղաքներէն շատ մը Հրե-
աներ անոր հետ կը թղթակցին նոր
լոյս մը ստանալու համար: Այս շար-
ժումին յարողներուն միակ կարգախօսը
սա է. «Մենք Քրիստոսը կ'աւելենք»:
Իսկ Հոս Անկէլէսի մէջ, Ամերիկայ, այս
տարուան Մայիս 31 ին աշխարհիս ա-
ռաջին քրիստոնեայ Հրեայ ժողովա-

րանին նուիրման պաշտօնը կատարուեցաւ: Այս Հրեայ քրիստոնեայ եկեղեցիին ամենակարկառուն գէմքն է Տր. Ա. Միքըլըն, Դերմանացի Հրեայ մը, որ Պէրլինի համալսարանին և ուրիշ համալսարաններուն մէջ բարձրագոյն ուսում մը առնելէ ետքը եղած է դատաւոր, օրէնագէտ: Ան հրաշալի կեր-

պով Քրիստոսը իբր իր փրկիչը գտնելէ ետքը կազմակերպած է Գալիֆորնիոյ մէջ The Hebrew Evangelization society անուն միսիոնարական մարմինը:

Հրեայ քրիստոնէութիւնը ահա այսպէս է. դարուն մէջ գոյութիւն կ'առնէ Աստուծոյ թագաւորութեան իբր մէկ նոր կարեւոր գործիչը:

«ԲԱՄ ՓՈՐՈՏԱՆ» ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Մերձաւոր Արեւելքի, Եւրոպայի և Ամերիկայի մէջ Հայ հրաժշտագէտները իրենց բարձր կարողութիւններովը մանաւանդ իբր երգիչ և նուագող, Հայր ճանչցուցած են իբր գեղարուեստասէր ժողովուրդ մը: Եւ սակայն գեղարուեստի իրազեկ ըմբռնումը, ճաշակը, մեր մէջ կը կարօտի մեծ բարեփոխութեան: Մեր մէջ եւրոպական առումով հրաժշտութեան մշակումը տակաւին սահմանափակուած է սակաւաթիւ անհատներու, և ժողովուրդին ընդհանուր զանգուածին մէջ ան կամ քիչ մշակուած է կամ գրեթէ երբեք չէ մշակուած: Ասոր ամենացոյցուն մէկ ապացոյցը կը գտնենք մեր ընկերային հաւաքոյթներուն մէջ: Մեր ժողովուրդը յաճախ հաճոյք չի վզար լսելով ամենաարժէքաւոր եղանակներու նուագումը, որ կարծես սովորական աղմուկէ շատ ալ չի տարբերիր իրեն համար: Մեր շատ մը հաւաքոյթներուն մէջ փոխանակ նուագաւորը եղանակներուն լուսթեամբ մտիկ ընելու՝ ամէն ոք իր քովին ին հետ կը բռնուի շաղակրատութեան, հոն քրքիչը աղմուկը, եռուզեռը անպակաս կ'ըլլան:

Մեր գեղարուեստական ճաշակին որակը յայտնի կ'ըլլայ նաև պարագաներու անյարմար երգերու ընտրու-

թեամբը: Հարսանիքներու, ընտանեկան հաւաքոյթներու մէջ յաճախ կը լսուին թրքերէն գոհիկ, թոյլ, և երբեմն անբարոյիկ երգեր և եղանակներ և կամ պարագային անյարմար ազգային կոչուած երգեր:

Վերջերս գիշեր մը Հալէպի փողոցներուն մէջ հանդիպեցանք բազմութեան մը որ «Բամ Փորոտան» երգելով հալսը կ'առաջնորդէր փեսային տունը: Ձկրցանք հասկնալ թէ այս ուղմաշունչ քայլերով ի՞նչ յարաբերութիւն ունի այդ հարսանեկան թափօրին հետ, որ կարծես կամ պատերազմի դաշտ կ'երթար յաղթանակ տանելու և կամ անկէ կը վերագոռնար յաղթանակով՝ պսակուած՝ քան թէ հարսանեկան յարկը կ'երթար խաղաղօրէն: Ասոնք պարզապէս խորհած էին թէ նման պարագայ մը առանց երգեցողութեան կամ առանց աղմուկի անցնել անյարմար է և ոեւէ երգ մը, ձայն մը, եղանակ մը կրնայ նոյն պէտքը գոհացնել: Մեր ընտանեկան հաւաքոյթները չպղծենք գոհիկ երաժշտութեամբ և ոչ ալ մեր արժէքաւոր ազգային երգերը անպատուենք անյարմար պարագաներուն և վայրերուն մէջ զանոնք գործածելով:

ՀՐԵԱՆ ԵՒ ԻՐ ՄԱՀԱՄԵՐՁ ԴՈՒՍՏՐԸ

Քարոզիչ մը իր հոգեւոր պաշտօնը կը կատարէր սովորական կերպով: Հազիւ պաշտօնին սկսած էր երբ օտարական մը ներս մտաւ: Ան նստաւ և սկսաւ ուշադրութեամբ մտիկ ընել: Բայց անոր դիմագիծերը խոր կսկիծ մը կը մատնէին: Քարոզի միջոցին մերթ ընդ մերթ իր արցունքները կը սրբէր: Քարոզիչը զգաց թէ օտարականը իրմէ հրապուրուած էր: Պաշտօնը լմնալուն պէս անոր քովը եկաւ և բարեկամական ձայնով ըսաւ. «Եթէ չեմ սխալիր դուք Հրեայ մըն էք»:

Օտարականը հաստատելու համար գլուխը ծռեց. «Կրնամ հարցնել թէ ինչպէս հոգաւ զրդուեցաք», ըսաւ քարոզիչը: Եւ Հրեան պատմեց իր կեանքին պատմութիւնը:

Օտարականը ասկէ շատ առաջ իր կիները կորսնցուցած և իր միակ աղջիկը զաւակով Ամերիկայ գաղթած էր: Տասնը և եօթը տարեկան դուստրը շատ նուրբ շատ տաղանդաւոր և տպաւորիչ էր, իր միակ միւսթարիչն էր նա: Անոր կրթութեան շատ հոգ տարած էր, մի քանի լեզուներ սորվեցուցած, իր նախահայրերուն կրօնքին մէջ մեծցնելու և զօրացնելու համար իր կարելին ըրած էր: Բայց վերջապէս աղջիկը հիւանդացաւ: Ծառ մը բժշկներու ջանքերը ապարդիւն մնացին և աղջիկը նիհարցաւ: Օր մը պարտէզին մէջ մինչ հեկեկալով կը պտըտէր աղջիկը իրեն լուր զրկեց որ իր քովը գայ: Երբ անոր անկողնին մօտեցաւ դուստրը իր ձեռքը բռնեց և յուզեալ կերպով հարցուց.

— Սիրելի՛ հայրիկս, գիտ կը սիրե՞ս:

— Զաւակս, գիտես որ աշխարհիս վրայ ոեւէ բանէն աւելի կը սիրեմ քեզ:

— Հայր, իրապէս զիս կը սիրե՞ս:

— Զաւակս, ինչո՞ւ այսպէս հարցնե-

լով զիս կը չարչարես: Ես կեանքովս ասիկայ քեզի չեմ ցուցուցած:

— Ես շատ լաւ գիտեմ որ դուն զիս սիրած ես, և ես ալ քեզ կաթողին կը սիրեմ: Կ'ուզե՞ս ինծի, քու մեռնող դուստրիդ, վերջին շնորհ մ'ալ ընել:

— Սիրելի՛ զաւակս, խնդրէ՛ ինչ որ կ'ուզես, քու փափաքդ պիտի գահացնեմ որչափ ալ սուղ արժէ ան ինծի:

Աղջիկը անկողնին մէջ նստաւ, եւ ռանդով իր հօրը աչքերուն մէջ նայեցաւ, և բոլոր ոյժը ժողվելով ըսաւ.

— Հայր, կը խնդրեմ քեզմէ որ նազով-րեցի Յիսուսի մասին երբեք գէշ չխօսիս: Անոր մասին շատ քիչ գիտեմ. բայց սա մէկ բանը գիտեմ որ Անիկայ իմ փրկիչս է, քանզի հիւանդութեանս միջոցին ես զԱյն քովս տեսայ և Ան իմ հոգիս բուժեց: Գիտեմ որ Ան զիս պիտի փրկէ թէպէտ ես հապիւ սկսած եմ զԱյն սիրել: Կ'զգամ թէ չուսով իրեն պիտի երթամ և յաւիտենապէս իրեն հետ պիտի ըլլամ: Հիմա կը խնդրեմ որ Նոր Կտակարան մը ծախուանես որ քեզի պիտի խօսի Յիսուս Քրիստոսի մասին: Եւ մահէս ետքը ինծի փոխարէն քու բոլոր սէրդ Անոր նուիրէ՛ս:

Աղջիկը այս ըսաւ և ուժառպառ բարձին վրայ ինկաւ: Իսկ հայրը ցաւէն և հոգէն ընկճուած ստիպուեցաւ զուրս ելլել: Եւ երբ քիչ մը շունչ առած ներս մտաւ իր սիրելի դուստրին հոգին արդէն գատուած էր մարմնէն:

Յուդարկաւորութենէն ետքը այս Հրեային առաջին գործը եղաւ Նոր Կտակարան մը ծախու առնել: Եւ Աստուծոյ Հոգին զայն առաջնորդեց կատարեալ ճշմարտութեան: Ան այսօր Քրիստոնեայ մըն է:

ՏԵՐՈՋԸ ՁԵՌՔԻՆ ՄԷՋ

«Ու ըսաւ անոնց, հոս ինծի բերիք զանոնք»: Մատ. 14, 18:

Այսօր իսկ կարելի է տեսնել Անդրէասի խոժոռ դէմքը, որով ցցուած է ան Յիսուսի դէմու կ'առարկէ յուսահատօրէն. «Հոս պատանի մը կայ, որ հինգ քարեղէն հաց ու երկու ձուկ ունի, բայց անոնք ի՞նչ պիտի ըլլան այդչափ մարդոց»: Բայց Յիսուս վստահ չեղաով հրամայեց. «Հոս ինծի բերէք զանոնք»: Ու Յիսուսի ձեռքին մէջ օրհնուեցան անոնք, ու փառահեղ, հզօր հրաշք մը կատարուեցաւ:

Բայց միանգամայն գործածուած առակ մը կայ անոր մէջ՝ բացատրող՝ թէ միւսնոյն իրերն ու իրականութիւնները որչափ տարբեր իմաստ և տարբեր արժէք ունին Տէրոջը Ձեռքին մէջ՝ քան ինչ որ ըլլալ կը թուին անոնք մեր վարչութեան տակ, մեր անճարակ ձեռքերուն մէջ: Մարդիկ ընդհանրապէս կը կարծեն թէ կեանքի մխրթարական կամ տխուր իրականութիւնները, որոշ և անփոփոխ իմաստներ ունին. առաջինները անխառն օրհնութիւն կը նկատեն մարդիկ, իսկ վերջինները կատարեալ անէծք՝ զուրկ ամէն արժէքէ: Ճշմարտութիւն այդ չէ սակայն: Այդ բոլորին իսկական արժէքը կախեալ է անկէ թէ մարդիկ ի՞նչ կերպով կ'ըմբռնեն անոնց իմաստը, թէ ինչ տեղ կ'ուտան անոնց կեանքի ամբողջութեան մէջ, և թէ հետեւաբար ինչ կերպով կը գործածեն զանոնք: Երբոր քրիստոնէութեան լոյսովը ըմբռնենք, ու գործածենք զանոնք, կեանքի իրականութիւնները յանկարծ կը կերպարանափոխուին և օրհնութեանց մշտաբոլս ազբուրններու կը վերածուին մեզի համար:

Տէրը կը բազմապատկէ արժէքն ու օրհնութիւնը այն ամէն բաներուն որ իր ձեռքերուն կը յանձնուին: հարստութիւն

նը օրհնութիւն կը նկատուի զրեթէ ամէն մարդու կողմէ, և արդարեւ՝ ամէն մարդ գրամի ուժով կրնայ որոշ չափով իր փափաքները իրագործել և շատ վայելքներու տիրանալ. բայց որչափ աւելի ճոխ և հիմնաւոր վայելքներու միջոց կը գառնայ հարստութիւնը երբոր՝ փոխանակ անձնատիրաբար, մեղքով և անարդար կերպով գործածուելու՝ բարեգործութեամբ և արդարութեամբ գործածուի ան: Այն քրիստոնեայ հարուստ որ իր հարստութիւնէն ճոխ բաժիններ կը հանէ կարօտներուն՝ շատ աւելի կը վայելէ իր հարստութիւնը իր առատածեռնութեան օրհնութիւնները սփռուած տեղներով ուրիշներուն վրայ, քան այն ազահ ունեւորը որ իր հարըստութիւնը կը պաշտէ, և կամ այն նտխանձոտ հարուստը որ իր զրացիին յաջողութիւնը չկրնալով տանիլ ախմարօրէն կը չարչարուի իր սիրտին մէջը: Մաքուր սրտով, անձնուէր ոգով, անխայթ խղճմտանքով, համադասները աւելի անուշ, հանդերձները աւելի վայելուչ, քունը աւելի խաղաղ և ապարանքները աւելի հանգստաւէտ կը դառնան:

Գեղեցկութիւնը մեծ բաղդաւորութիւն կը նկատուի մարդոց մէջ. բայց ի՞նչ արժէք կը ներկայացնէ գեղեցկութիւնը առանց հոգիի գեղեցկութեան: Ի՞նչ տգեղ կը դառնայ ամենագեղեցիկ դէմք մը, որ տգեղ ոգի մը, տգեղ մտքեր, տգեղ զգացումներ և շարժառիթներ ունի իր հոտին: Կրկնապէս գեղեցիկ է այն գեղեցիկ դէմքը որուն վրայ Քրիստոսի սէրն ու սրբութիւնը կը ցլայ:

Մարդկային կեանքը ճոխացնող ուրիշ մէկ օրհնութիւնն է բարեկամութիւնը, որ տարբեր սրտեր իրարու կը զօդէ, և մարդիկ իրարու կեանքին և

երջանկութեան մասնակից կ'ընէ. բայց ռ'ըջափ կը նսեմանայ բարեկամութիւնը երբոր քրիստոնէական նկարագրի վրայ չէ հաստատուած և անոր զսպանս կը կազմած են գռեհիկ մտքեր և անձնական հաշիւներ: Ինչ թանկագին և երջանկաբեր կը դառնայ բարեկամութիւնը երբոր Տէրոջը Ձեռքին մէջ զրուի ան, և անխարդախ սիրով, ճշմարտութեամբ և արդարութեամբ կառավարուի:

Ասկէ աւելին պէտք է ըսել սակայն: Իրերու և իրականութիւններու օրհնութիւնները միշտ ալ թէական են մարդոց համար: Նոյն բաները կրնան թէ՛ օրհնութիւն և թէ՛ անէծք ըլլալ. արդարեւ անոնք յաճախ օրհնութիւն կ'ըլլան մէկուն համար և անէծք՝ ուրիշի մը համար, համաձայն զանոնք ըմբռնելու և գործածելու եղանակին: Միայն Տէրոջը Ձեռքին մէջն է որ ապահովարար իրական և ինքնակամ օրհնութիւն կ'ըլլան անոնք: Հարստութիւնը բացարձակ օրհնութիւն մը չէ. յաճախ կը պատահի որ անձնասէր և մեղապարտ մարդոց ձեռքերուն մէջ իրական անէծք դառնայ և իր տիրոջը կործանման պատճառ ըլլայ ան: Այսպէս շատեր հարուստ ըլլալուն համար աւելի պատեհութիւն գտած են անառակ կեանք վարելու, և և քիչ հոգքը փճացուցած են իրենց մարմիններն աւ հոգիները, հարստութիւնն ալ միասին: Գեղեցկութիւն, զօրութիւն, դիրք և տաղանդ և բարեկամութիւն աշխարհիկ կիրքերու գործիք դառնալով յաճախ պատճառ դարձած են իրենց աէրերը նիւթապէս փճացնելու և բարոյապէս ամէն արժանիքէ մերկացնելու: Տէրը միայն կ'երաշխաւորէ իրական և տեւական օրհնութիւն ընել այդ ամէնը. երբոր անոր աչքովը դիտենք, անոր կշիռքովը կըշռենք և անոր սկզբունքներովը կառավարենք զանոնք՝ օրհնութիւն կը հընձենք. այլապէս վտանգաւոր ուժերու

հետ է որ կը խաղանք:

Ու դեռ աւելին կայ. Տէրը կը յեղաշրջէ նոյն խի «պատեհաս»ներու և «դժբաղդութիւն»ներու լմաստը, և օրհնութեան կը փոխէ զանոնք: «Աղէկ եղաւ ինծի որ վշտացայ»: Աղքատութիւն, տրտմութիւն, արցունք և տառապանք, փորձութիւն և անյաջողութիւն մարդկօրէն խօսելով դժբաղդութիւններ են միայն. բայց Տէրոջը ձեռքին մէջ անոնք օրհնութեանց աղբիւրներ կը դառնան: Անոր վարչութեան տակ նախ աւելի տանելի կ'ըլլան անոնք, քանի որ իր օգնութիւնը, ներշնչումն ու մխիթարութիւնը աւելի քան կը հակադէմն անոնց ճնշումին. և յետոյ՝ երկինքէն լուսաւորուած մեք կը տեսնենք անոնց տեղը մեր կեանքին մէջ, կը հասկնանք անոնց յարաբերութիւնը գերագոյն նպատակներու հետ, և կ'սկսինք ըստ այժմ գործածել զանոնք, և տառապանքի այդ հալոցէն կը քաղենք համբերութիւն, զօրութիւն, աւելի հաւատք և աւելի սրբացած կեանք:

Այսպէս Տէրոջը Ձեռքին մէջ ամէն բան կը յեղաշրջուի. Անոր մատներուն մոգական հպումովը ամէն բան, ամէն բան օրհնութեան կը վերածուի:

Եւ տակաւին մեր ականջներուն մէջ կ'արձագանդէ իր ձայնը. «Հոս, ինծի բերէք զանոնք»: Ընթերցող, Անոր տար ինչ որ ունիս. Անոր տար հարըստութիւնդ, զօրութիւնդ, պաշտօնդ, խելքդ, գեղեցկութիւնդ, բարեկամութիւնդ, պատեհութիւնդ. Անոր տար նաեւ աղքատութիւնդ, տրտմութիւնդ, տառապանքներդ, հիւանդութիւնդ և բոլոր դժբաղդութիւններդ, և Այն, ապահովաբար օրհնութեանց պիտի վերածէ զանոնք: Դու չես գիտեր թէ ինչպէս պէտք է գործածել այդ բաները. Թող Տէրը գործածէ զանոնք քեզի համար:

ՏՐԳՐԱՆ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԻՌԹԵԱՆ ՄԷՋ ՀԱՆԳԱՆԱԿԻՆ ԴԻՐՔԸ

(Շար. եւ Վերջ)

6. ՀԱՆԳԱՆԱԿԸ ԻՐ ԻՍԿԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ
 ՀԱՆԳԱՆԱԿԸ չ'առնէր սա պարագայէն
 թէ ան ներկայիս կարգ մը եկեղեցիներու
 մէջ կը գործածուի, կամ թէ ան
 ընդհանուր ժողովներու կողմէ կազ-
 մուած և հաստատուած է: Քիչ մ'ալ
 առաջ երթալով կրնանք ըսել թէ առա-
 ջին դարու եկեղեցիին նոյն իսկ Առաք-
 եալներու կողմանէ անոր գործածուիլն
 ալ իրեն հեղինակութիւն չի տար: Շատ
 բնական է որ ասոնք մեծ կարեւորու-
 թիւն և ազդեցութիւն ունին, բայց
 ասոնց բոլորն ալ կը նմանին մուրհակի
 մը պատրաստուելուն, որ առանց ստո-
 րագրութեան արժէքէ զուրկ է: Հան-
 դանակի մէջ այս ստորագրութիւնը սա
 պարագան թէ ան այսօրուան հոգեւոր
 փորձառութեան և բանական դատողու-
 թեան համաձայն կուգայ: Ուէ մէկ
 բան պէտք է իրապէս ներքին արժէք
 մ'ունենայ, որ առանց անհատի մը կամ
 մարմնի մը կռթնելու կարենայ կան-
 գուն և հաստատ մնալ և դարեւոր մէջէն
 իր գոյութիւնը շարունակել: Ահա հան-
 դանակը այսպիսի ճշմարտութիւններ կը
 պարունակէ: Դարձեալ պէտք է մոռ-
 նանք որ այսօր հանգանակը բանաձե-
 ւելու կամ հաստատուելու գիրքին մէջ
 չենք գտնուիր: Մենք անոր մէջ ծնած
 մարդիկ ենք: Հետեւաբար, առանց
 անոր սխալը փաստելու զայն մերժել
 իմաստութիւն չէ: Շիտակ է որ երա-
 խային՝ ծծել, և մանուկին ճաշել առա-
 ջին անգամ մայրը սորվեցուցած էր:
 Այսօր անիկայ մեծցած է և օրը մի քա-
 նի անգամ կը ճաշէ և ասիկայ իր մօրը
 հնազանդած ըլլալու համար չ'ըներ, այլ
 իր առօրեայ պէտքը զոհանջելու հա-
 մար: Ծաշել չուզելը հիւանդութեան
 նշան պէտք է նկատուի: Նմանապէս

տարբերութիւն չ'ըներ թէ ո՞վ պատրաս-
 տած է հանգանակը. ան իր այսօրուան
 հեղինակութիւնը կ'ստանայ ներկայ
 մարդկային սրտին և մտքին թարգմա-
 նը ըլլալու հանգամանքէն:

7. ԹԷ ՀԱՆԳԱՆԱԿԸ Ո՞ՐԻՐ ԻՐ ՄԱՆ-
 ՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՄԲԸ ԸՆԴԱՐՁԱԿՈՒԹ-
 ՅԱՒ, ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒԵՑԱՒ: Քրիստո-
 նէութիւնը եկեղեցին կազմակերպած է
 հոգեւոր կեանքը ապրելու և զօրացնե-
 լու համար, և աստուածաբանական
 դպրոցներ բացուած է հանգանակը խո-
 րունկցնելու և սորվեցնելու համար: Ը-
 սել չենք ուզեր թէ եկեղեցիի մէջ հան-
 դանակի մասին և դպրոցի մէջ կեանքի
 մասին չեն ճառեր, բայց կեանքը զիստ
 լարապիս եկեղեցիին և հանգանակն ալ
 զըլխաւորապիս դպրոցին նիւթն է: Ասոր
 մէջ աշխատանքի բաժանման օրէնքը
 կայ: Աստուածաբանութեան ուսուց-
 չին գանգատէ թէ ուսումնաւարտ երի-
 տասարդ մը հոգեւոր կեանքը չի գիտեր:
 Անոր տալիք պատասխանը որոշ է. «Եղ-
 քայր, գիտես որ ոչ մէկ դպրոց չի կրնար հո-
 գեւոր կեանք հաղորդել անոր որ զայն չուէ:
 Դպրոցը կրնայ ասոր համար պէտք եղած մի-
 ջախայրդ պատրաստել, բայց չի կրնար վերս-
 տնել ծնունդը տալ: Երբայր կը տեսնեմ որ
 հոգեւոր կեանքի համար յուն պատասխանա-
 տուքիւն եկեղեցիի եւ ընթանիքի կը պա-
 րան: Իսկ մեր գործը կը բաղխանայ անոր
 մեջին մէջ նոր գիտելիքներ դնելը»:

Այս արտայայտութիւնը շատ շիտակ
 է: Եկեղեցին է որ ամէնէն աւելի կը
 աշխատի որ երիտասարդը հոգեւոր
 կեանք ունենայ, և դպրոցն է որ տրա-
 մաբանական ընդունելի ձեւով պիտի
 բացատրէ այդ կեանքի վարդապետա-
 կան մասը: Այս երկուքը իրարու լրա-
 ցուցիչներ են: Իր պարտականութեան

մէջ անհաւատարիմ հոգուի մը՝ կեանքը անտեսելով վարդապետութիւնը շեշտելը որչափ որ սխալ է, նոյնքան սխալ է իր ուսուցումին մէջ թերի գտնուած ուսուցչի մը՝ փոխանակ խոստովանելու կեանքը շեշտելը: Եւ եթէ առաջին և վերջին բանը կեանքն է, և հանգանակին պէտք չկայ, դպրոցի գոյութեան պէտք չի մնար: Մէկուն այսպէս խորհրնու պնդելը պիտի նշանակէ իր նշանած ճիւղը կտրել կամ նստած աթոռը տապալել, իր գաղափարը սխալ ըլլալուն համար չէ այլ իր պարտականութիւնը անտեսելով ուրիշին կողմէ ուսումնասիրելի նիւթը իր կողմէ նկատի առնուելուն համար: Ֆիզիքական կեանքի շարունակութեան համար օգ և ջուր անհրաժեշտ են, բայց մէկը միւսին տեղ զործածել մահուան պատճառ կ'ըլլայ: Նմանապէս, կեանքի և հանգանակի դիրքերը իրարու հետ փոխանակել կամ մէկը միւսին զոհել հոգեւոր կեանքի մէջ անձնասպանութիւն ըսել է:

8. ՀԱՆԳԱՆԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ շատ նուրբ գործ մ'է: Անոր լաւ գործածութիւնը որչափ որ օգտակար կ'ըլլայ ըլլալ, սխալ գործածութիւնն ալ կ'ըլլայ: Նոյնքան փնասակար ըլլալ: Քանի որ ան կը ջանայ է՛ն կտրել ու ճշմարտութիւնները ամէնէն կարճ նախադասութիւններու և ամէնէն քիչ բառերու մէջ խտացնել, անոր մեկնութեան մէջ "ըխտակելու վտանգը կայ: Շիտակ է որ դարուն հոգեւոր և գիտուն մարդերը

հանգանակը պատրաստած են օգտուելով Ս. Գրքէն, հոգեւոր փորձառութեանէն և խոր ուսումնասիրութենէն: Բայց այս աղբիւրներէն կարելի բոլոր օգտագործումը չեն կրնար սպառած ըլլալ: Ուրեմն՝ ինչպէս որ չիտակ չէ զայն պէտք եղածէն աւելի յարգել, իբր հինցած արտայայտութիւն մը զայն գուրս նետել ալ ներելի չէ: Անոր կցուած եզրակացութեան և հաւատքի արտայայտութեան ձեւը, մինչ իր ատենին համար բաւարար է թերեւս այս օրուան համար չէ. զայն մասամբ կտրատել կամ բոլորովին մերժել թերեւս ներկայ հոգեւոր տկարութեան մէկ արդիւնքն է: Հանգանակը անհրաժեշտ է ոչ թէ մարդուն փրկութեան համար, այլ փրկումը չըլլալուն համար: Հաւասարակշռութեան ուղղորդ ըլլալ ապահով կերպն է: Հոգիւր գաւազանը փոխանակ հոգեւորական իմաստով գործածելու անով պատժելու պէտք չէ փորձուի: Միւս կողմէն գաւազանը բոլորովին պէտք չէ ձգէ, զայն ծերութեան մէկ խորհրդանշը նկատելով: Գաւազանը հոգիւին մասնաւոր նշանը և ոչխարին համար մխիթարութեան պատճառ է:

ՄԵԿ ԽՕՍՔՈՎ. ՀԱՆԳԱՆԱԿԸ ՊԵՏՔԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻ ԲԱԺՆԵԼԷ ԱՒԵԼԻ ՄԻԱՑՆԵԼՈՒ, ԽՕՍԵԼԷ ԱՒԵԼԻ ԽՈՐՀԻԼ ՏԱԼՈՒ, ԵՒ ՄԻԱՑՆ ՄՏՔԻ ԱՐՏԱՅԱՅՏՏՈՒԹԵՆԷՆ ԱՒԵԼԻ ՍՐՏԻՆ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ԿԵԱՆՔԸ ԲԱՅԱՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՄԻՍԱԿ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՆՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ՇԱՀԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

Գրութիւնն թարգմանութիւնն է յօդուածի մը որ Reader's Digest թերթին կողմանէ Strategy in Handling People անուն գրքէն ամփոփարար քաղած է:

Ծն. Խմբ.

Ո՞վ չէ նշմարած որ մարդիկ հաճոյք կ'զգան փոքրիկ ծառայութիւններ մատուցանելով, մասնաւորապէս այնպիսի շնորհներ բաշխելով որոնք իրենց անձնապէս չահագրգռուած կամ սիրած մէկ

բանին հետ յարաբերութիւն ունին :

Երբ մենք մարդու մը՝ իր մասին աւելի լաւ գաղափար մը տանք, անոր բարեկամեցողութիւնը կը շահինք. քանզի այս կերպով մենք անոր հիմնական մէկ պէտքը կը գոհացնենք: Ահա այս է գաղտնիքը որով ինքզինքնիս մարդերուն հաճելի կ'ընծայենք — այսինքն մարդերու օգնել որ իրենց եւր բարձր պահեն . . . :

Միւս կողմէն կան մարդիկ որոնցմէ մենք խոյս կուտանք, անոնց խիստ շատ պարտական եղած ըլլալնուս համար: Երբ մենք ուրիշներուն կ'օգնենք մեր եւր կը բարձրանայ. բայց երբ ուրիշները մեզի օգնեն մեր եւր կը վերաւորուի:

Անշուշտ ասիկայ չիտակ չէ մարդոց մեզի հանդէպ ցուցուցած փոքր քաղաքավարական արարքներու մասին, կամ այն բարեկամական փափկանկատութեանց մասին որոնք մեր վրայ ծանրը պարտք մը չեն դնէր:

Բայց իմաստութիւն չէ մարդերը այնչափ երախտապարտ թողուլ որ անոնք չկարենան փոխադարձել իրենց ընդունած շնորհքները: Եթէ մենք խիստ շատ բան ընենք անոնց համար առեւտրէն պէս անոնք յաճախ մեզ չպիտի սիրեն գաղտնաբար կամ յայտնի կերպով:

Բոլոր առաջնորդները սա նախազգուշական կէտը նկատի կ'առնեն: Երբ անոնք ուրիշի մը օգնելու ըլլան կ'աշխատին որ անոր հետեւ դիւրին ըլլայ այդ ժառանգութիւնը փոխադարձել եւ ոչ պարտաւոր մնալ: Այս կերպով անոր ինքնասիրութիւնը անվթար կը պահեն եւ զօրաւոր զրգիւ մը կը ըլլան որ ան ալ իր կարգին իրենց օգնէ: Անոնք բազմապիսի հարցեր կը լուծեն պարզապէս մարդերուն առիթ տալով որ իրենց ծառայութիւններ, շնորհներ ընեն:

Հէնրի Սթենթըն տեսաւ որ իր լաւ

բարեկամներէն մէկը իրմէ կը պաղի եւ կը հեռանայ: Ասոր վրայ իր բարեկամէն, որ ճարտարագէտ մ'էր, խնդրեց որ իր նոր կալուածին մէջ ջրաբաշխական դրութեան համար նոր ծրագիր մը պատրաստէ եւ իրեն խորհուրդ տայ: Ծարտարագէտը ակնկալուածէն շատ աւելի խնամքով ծրագիր մը պատրաստեց եւ գործնական կարգ մը թելադրութիւններով կալուածատէրին ներկայացուց: Այդ օրէն սկսեալ հին բարեկամութիւնը վերահաստատուեցաւ:

Տոնալտ Սմիթի, որ վերջերը ծանօթ եղաւ իւր Լորտ Սթրէթքոնա, գործունէութեան առաջին շրջանին մէջ նման ղէպք մը պատահած է: Իբր մուշտակ պնով մը ստիպուեցաւ իրեն թշնամի որսորդի մը բարեկամութիւնը շահիլ, եւ այս նպատակաւ խնդրել որսորդէն որ գիշերուան համար իրեն ապաստանարան մը մտաւ. եւ յաջողեցայ:

Եւ այդ մեծագոյն դիւանագէտը, Անգլիոյ էտուրա է. թագաւորը իր բոլոր ճարպիկութիւնը գործածեց Սմիթիկայի նոր գեոպանը, Ժոզէֆ Քոէյթը, հրապուրելու, եւ մասնաւոր ջանքեր կատարեց իրենց առաջին պատահուածին փոքրիկ շնորհ մը ուղեւոր: Դէսպանէն խնդրեց Եր Մէքքինլիի եւ Ռուզվելթի լուսանկարները իրեն դրկէ:

Մեկ մարդոց բարիկամեցողութիւնը կը շահենք, հաճելի կերպով մը անոնց ուշադրութիւնը կը գրաւենք, երբ անոնցմէ խընդրեմք որ իրենց հաճոյքով ընելիք մեկ շնորհ մեզի ընեն:

Քանզի այս կենցաղագիտութիւնը՝ տիեզերական մարդկային պէտքի մը վրայ կը կենայ, եւ անիկա գրեթէ ամէն բնականոն մարդուն քով, գերադասի եւ ստորադասի, օտարի եւ ազգականի, մեզմէ ախորժողին եւ չախորժողին քով կը յաջողի: Բայց մենք պէտք է ուշադիր ըլլանք նկատի առնելու անոնց անձնական շահագրգռութիւնները, սովորու-

թիւները և սիրած բաները: Անոնք ամէնէն աւելի հաճոյք պիտի զգան ընելէ այն փոքր շնորհը որ իրենց անձնական մասնաւոր շահագրգռութեանց մէկուն հետ յարաբերութիւն ունի:

Ասոր յաջողութիւնը առաջնորդեալութեան անձնաւորութեան մէջ եղող բանէ մը կախում ունի. բան մը զոր մենք ալ կրնանք մշակել: Անոնք խորապէս և խկապիս կը հետաքրքրուին ուրիշ մարդերով:

Շնորհ խնդրելու այս կերպը եթէ պաշտօնեամբ կը գործածուի՝ պարզապէս խաբելու ձեւ մը կ'առնէ: Բայց եթէ մենք ուրիշին բարիքը խորհինք և իրապէս անոր բարեկամութիւնը կը

ուզենք, այս զգացումը անոր ճանչընելու միջոց մը կ'ըլլայ: Մարդերը այս կերպով ուսումնասիրող մը կը զրէթէ, «Բուզվէլթի մեծ ժողովրդականութեան պատճառը ուրիշ մարդերով և անոնց գործերով խորապէս հետաքրքրուելն էր»: Անոր ցցուն յատկանիշն էր իր ընկեր արարածներուն հանդէպ սէր և տաքուկ կարեկցութիւն մը:

Հրապոյր. քաղաքական, «անձնաւորութիւն» — այս բոլորը ծագում կ'առնէ մարդերով խկապիս հետաքրքրուելու այս զգացումէն: Այս է միայն ուր ուրիշներու հետ մեր կենցաղագրական վերաբերումին ոյժ կուտայ:

ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ԵՒ ԹՐԱԿԻԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍԻՆ ԱՅՑ ՄԸ

(Շար. և Վերջ)

6. ՔՍԱՆԹԻ. Հոս կան 200 հայ ընտանիքներ: Եկեղեցիի և դպրոցի նոր շէնքեր չինուած են եկեղեցապատկան դետնի մը վրայ, զոր 30 ընտանիքներէ բաղկացեալ տեղացի հայութիւնը ժամանակին ծախու առած է: Այս շէնքերուն մօտ 300 հազար տրախմի (մօտ 1000 օսմ. ոսկի) ծախսուած է: Աշտկերտութեան թիւն է 300, ուսուցիչներունը՝ 4. ունին նաեւ քահանայ մը:


Հոս կայ նաեւ 25 Հայ և Յոյն ընտանիքներէ բաղկացած աւետ. համայնք մը, որուն մէջ կը գործեն Պատ. Զիլուդոս Զիքաս և աւետարանչուհի մը: Պատ. Զիքաս մասնաւոր գործունէութիւն մ'ունի ոչ—քրիստոնեաներու մէջ: Ոչ միայն Քսանթիի մէջ այլ թրակիա գտնուող 103 հազար Թուրքերու կարեւոր կեդրոնները տարին մի քանի անգամ կ'այցելէ, և անոնց համար մասնաւորապէս պատրաստուած գիրքերը կը բաշխէ: Ես անձամբ Թուրքերէն լսեցի թէ այս գրքոյկներն ու հատոր-

ները շատերու կողմէ կը կարդացուին: Շատ մը Թուրքեր Փրոֆ. Լ. Լեւոնեանի հեղինակած գիրքերուն մասին գնահատանքով կը խօսին:

Իմ հոս անցուցած կիրակին երկու անգամ քարոզելու առիթը ունեցայ:

7. ԿԻԻՄԻԼՃԻՆԱ գտնուող 240 Հայ ընտանիքներու 83 ը տեղացի են: Իրենց եկեղեցական շէնքը 1834 ին կառուցուած է: Ասկէ զատ ունին սեպհական դպրոցական շէնքեր և տարեկան 40000 տրախմի (մօտ 150 օսմ. ոսկի) հասոյթ բերող ազգապատկան շէնքեր: Դպրոցին մէջ վեց ուսուցիչ և վարժուհիներով կը կրթուին 150 մանուկներ: Ունին նաեւ քահանայ մը: Տրուած տեղեկութեան համեմատ չըջկայ գիւղերէն իւրաքանչիւրին մէջ 3—5 աւան Հայ ընտանիքներ կան:

Կիւմիւլճիւնայի մէջ Աթանասիորդի Աթանասի միջոցաւ սկսած է աւետարտական գործը, որ տակաւին իր տանը մէջ կը շարունակէ: Աթանաս



ծնած է 1827 ին։ Եղած է գինուոր, աւագակ և վաճառական։ 50 տարեկանէն հտքը գրել կարդալ սորված է, 60 տարեկան եղած ատեն ամուսնացած է և միակ զուստը մը ունեցած է, որ այսօր Աթէնքի մէջ ընտանիքի տէր է։ Տիկ. Աթանաս մեռած է։ Ծերունին Աթանաս 105 տարեկան մէջ առանձինն կը բնակի իր տունը։ Մարմինը առողջ, աչքերն ու ախանջները առողջ են. ոչ միայն մտքովը այլ նաև ձեռքերովը շարունակ կը գործէ։ Հիմակուան արհեստն է սանտրագործութիւն։ Իր կեանքին մէջ ունէ ողելից ըմպելիք

կամ ծխախոտ երբեք չէ գործածած։ Իր աղւանները իրեն ծառայած են մինչեւ 90 տարեքը. 100 տարեքէն հտքը նոր երեք աղւաններ հանած է։

Աթանասի մեծ հայրը հոգևոր մէկը եղած է, և ատեն մը վանական եղած է։ Քրիստոնէութեան մասին յաճախ Աթանասին ըսուած է թէ պէտք, բայց ինքը քրիստոնեաները հալածած է, շատ անգամ մանուկները զրկած է որ անոնց աղօթաժամերը քարկոծեն։ Վերջապէս, ինչպէս որ Սողոմի աչքերը բացուեցան՝ 78 տարեկան Աթանասի ալ հոգևոր աչքերը կը բացուին, Աստուծոյ խօսքը կ'ընդունի և կ'ապաշխարէ։ Ահա այդ օրէն սկսեալ 27 տարեկանէ ի վեր իր տունը աւետարանը կը քարոզէ և այս կերպով կազմած է փոքր հեկտեղի մը։ Երէկուան հալածիչը այսօրուան աւետարանիչը, երէկուան հոգևոր պաշտօնը արգիւտը այսօրուան առաջնորդը եղած է։ Երբ Աստուծոյ շնորհքն ու սէրը մէկը կը գրաւեն անոր միջոցաւ հրաշքներ կը կատարուին եթէ ան

ծեր իսկ ըլլայ։ Ահա ասոնցմէ մէկն է Աթանաս։

Առիթը ունեցայ երկու անգամ խօսելու այս ծանօթ գործիչին տունը։ Թրքերէն լեզուով խօսեցայ օրպէսզի ներկայ Հայ և Յոյն բարեկամները կարենան հասկնալ։ Ալեւոր աւետարանիչին ջերմ աղօթքը մեծապէս քաջալերեց մեզ։ Անիկայ իր շնորհակալութիւնը յայտնեց, յաջողութիւն մաղթելով մեզ ուղարկեց։

8. ՏԷՏԷ ԱՂԱԾ մեր ամէնէն հտքը այցելած տեղն էր, ուր 200 Հայ ընտանիքներ հաստատուած են. ասոնց

50 ը տեղացի են: Իրենց սեպհական եկեղեցիի և դպրոցի շէնքեր, և տարեկան 30,000 տրախմի (մօտ 100 Օսմ. սակի) հասոյթ տուող շէնքեր ունին: Աշակերտներուն թիւն է 105, ուսուցիչներունը՝ հինգ. քահանայ մը կը կատարէ հոգեւոր պաշտօնը: Վերջին կիրակին, երբ ես հոս գտնուեցայ, նախ թրքերէն լեզուով Յոյն բողոքականներուն, և ապա քահանային հրաւէրով Հոյ Առաք. եկեղեցիի մէջ հայերէն լեզուով քարոզեցի: Ներկայ հոծ ունկընդրութեան մէջ շատ քաջալերական էր տէսնել շատ մը երիտասարդներ և իրիտասարդուհիներ:

Ամէն եկեղեցիի մէջ երկար խօսակցութիւններ ունեցանք քահանաներու հետ, որոնք փափաքեցան կիրակին իրենց մէջ անցնել և քարոզել, բայց շատ մը տեղեր կարելի չեղաւ իրենց այս փափաքը գոհացնել ժամանակի սղութեան պատճառաւ:

Յաւալի է եկեղեցիներու մէջ տեսնել մէկէ աւելի ընկերութիւններու գոյութիւնը: Իցիւ թէ մեր բոլոր երիտա-

սարդները մէկ միութիւն կազմէին և անկողմնակալ ու վեհ ազիով եկեղեցիին և դպրոցին փարէին և անոնց օգնէին:

Այս կարեւոր կեդրոններու մէջ շատ մը մանուկներ դպրոց չեն երթար տարբեր պատճառներով: Վստահ եմ որ անոնց համար գիշերային դպրոց մը շատ օգտակար պիտի ըլլայ:

Ամէն քաղաքի մէջ ժողովուրդներն ու անհատները հաճոյքով մասնակցեցան հոգեւոր պաշտօններուն և յիշեցին թէ իրենք «անօթի ու ծարաւ են արդարութեան», և խնդրեցին որ նման հոգեւոր այցելութիւններ կրկնուին:

Իցիւ թէ չըջիկ աւետարանիչ մը կարենայ այս տեղերը աւելի երկար առնէ մնալով գործել, և չըջական գիւղերը այցելելով եկեղեցիէ ու դպրոցէ զուրկ գիւղաբնակիները մխիթարել ու քաջալերել: Շատեր թախանձանքով կը խնդրեն այս. «Հոռնձքը շատ է, բայց մշակները քիչ: Ուստի հոռնձքին Տէրոջը աղաչեցէք, որ մշակներ հանէ իր հոռնձքին»:

Սեղանիկ

Կ. Ս. ՖԱՐԱՃԵԱՆ

ՔԷՍԱՊ ԻՆՉՊԷՍ ՈՐ ԷՐ ԱՍԿԷ 38 ՏԱՐԻ ԱՌԱՋ

1893 ին էր: Գոլէճի մէկ դասընկերիս հետ Այնթապէն մեկնեցանք Հիւս. Ամերիկայ երթալու համար: Որոշած էինք Սուէտիոյ կամ Լաթաքիոյ ճամբով նաւ մտնել: Ամերիկայի մէկ քաղաքը գտնուող Ե. Ք. Ընկերակցութիւնը որոշած էր ստանձնել իմ աստուածաբանական կրթութեանս բոլոր պատասխանատուութիւնը:

Երիտասարդութիւնն ու այդ տարիքիս երազները զիս կախարդած էին: Բանի մը շաքաթներ Անտիոքի և Սուէտիոյ Հայ գիւղերը պտըտեցանք Կիպրոս երթալու համար ճամբայ մը գտնե-

լու նպատակով, ապա աւելի բանաւոր գտանք Քէսապի ճամբով Լաթաքիա երթալ և առկից Կիպրոս անցնիլ: Քէսապի մէջ ուրիշ վէց ընկերներ ալ զըտանք, և որոշեցինք երկուօր ետքը գիւղերը մեկնիլ: Երբ յաջորդ առտուն արթնցայ գոռայ որ ընկերներս զիս գիւղը ձգելով կէս գիշերին ճամբայ ելած են՝ իրենց մէջ եղած համաձայնութեան համեմատ: Ես ալ երկուօր ետքը նախախնամութեան ապաւինելով առանձինն գիշերը ճամբայ ելայ և գիւղերն ալ Լաթաքիա հասայ:

Այդ օրերուն Լաթաքիոյ սակաւաթիւ

հայերը Հոգեառները կը բնակէին. ջորեպանը զիս ալ հոն առաջնորդեց: Թագէտս վարդապետ կը բացակայէր, և ետր բնակած բաժնին մէջ հիւրընկալուեցայ: Քիչ ետքը քարեկամ մը քովս գալով ինծի պատմեց թէ Ամէրիկայ երթալու համար Քէսապէն եկած կարգ մը Հայեր ձերբակալուեցան, իրենց հետը գտնուած օրիորդ մը Յոյն մը թափախուեցնելու արգելքի տակ զրուեցաւ և միւսները բանտը զրուեցան, և թէ մի քանի օր ետքը հակոգութեան տակ իրենց տեղերը պիտի զրկուին: Աւելի ըլլալով յայտնեց թէ քաղաքին մէջ պանդուխտները կը փրնտուեն, և թեկադրեց որ հոգեառներէն քաղաքը չիջնեմ, նոյնիսկ պատուհանը չտեսնուիմ. «քանզի», յայտնեց այն, այն շէնքը զօր բակին ծայրը կը տեսնես կառավարական պալատն է և քեզ կը տեսնեն»:

Մէկէն բոլոր յոյսերս մարեցան, թուշխու տտին զարնուած թռչունի մը պէս ինկայ. հորիզոնս խաւարեցաւ: Մինչեւ կէս գիշեր արթուն մնայի և որոշումս տուի: Եւ այն տտին քովս պառկող ջորեպանը արթնցուցի և Քէսապ վերադարձայ:

Ծանօթ բարեկամներս և բոլոր ժողովուրդը ասիկայ բարիքի նշան մը նկատելով զիս ուսուցչութեան հրաւիրեցին: Տարի մը պաշտօնավարեցի. ինչ հաճելի տարի մ'անցուցի: Չորս դասարաններ ունէր զպրօքը, որուն միակ ուսուցիչը ես էի: Առտունէ մինչեւ իրիկուն բոլոր կարգերուն դասերը ես կ'աւանդէի: Չեմ գիտեր թէ ինչպէ՞ս կրցայ տոկալ: Երիտասարդ էի, զուարթ էի, բոլոր ժողովուրդը զիս կը քաջալերէր, աշակերտները զիս կը սիրէին: Տարին այսպէս անցաւ: Ծառ բաներ մուցուեցան, բայց սա չորս բաները չեմ կրնար մոռնալ և չպիտի մոռնամ:

1. Քէսապի ք հեղեցասէր էին:

Այն տտին Քէսապ 12000 բնակիչներ ունէր, որուն մէկ երրորդը Բողոքականներ էին: Քէսապի հարստութեան ճառ հարիւրը ասոնց կը պատկանէր: Զանգակը զարնուելէն հինգ վայրկեան ետքը բոլոր ժողովուրդը, այլ ու կին մեծ ու պզտիկ, եկեղեցիին շէնքը լեցուցած կ'ըլլային: Քարոյիչը եթէ հինգ վայրկեան ուշանար զժողովուրդի համար բեմը կը հասնէր: Բոլոր ժողովուրդը աշխուժով կ'երգէր: Աստուծոյ ներկայութիւնը զգալի կըլլար:

Այրերու և կիներու բաժնիները իրարմէ բաժնուած էին մէկ կանգուն բարձր տախտակորմով մը, որուն արեւելեան կողմը բեմէն մինչեւ սեմը ծընրագիր կը նստէին մօրուսաւոր ծերերը իրենց տարիքին կարգովը, և իրենց թոռերն ալ իրենց առջեւը ծնրագիր նստիլ կուտային: Ինչ լըջութիւն, ինչ լուսթիւն: Բոլորին անուները և դէմքերը շարժապատկերի նման աչքիս առջեւէն կը տողանցեն:

2. Այդ տտին Քէսապի մէջ հայհոյութիւն չլսեցի: Բոլոր աւանին մէջ միայն մէկ հայհոյող կար, որ կարծես միշտ հայհոյելու համար պայմանաւորուած էր, այնպէս որ ամէն բառէն առաջ եւ վերջը սարսափելի կերպով կը հայհոյէր: Ժողովուրդը իրմէն և իր լուտանքներէն այնքան զգուշ էին որ որոշած էին երբեք չհայհոյել:

3. Օղի չկար: Եթէ երբեք իբր գարման գործածուելու համար պէտք ըլլար, մարդիկ կ'ստիպուէին այդ հայհոյող մարդուն տունը երթալ: Ուրիշ ոչ մէկ տեղ օղի չեր գտնուեր: Արդեօք հայհոյանքի և օղիի միջեւ զադունի դաշինք մը կար: Բայց իրողութիւնը այս էր:

4. Կիրակին սուրբ օր էր: Եթէ կար տեղ մը ուր առանց բացառութեան Բողոքականի, Առաքելականի, Կաթոլիկի կողմէ Կիրակին կը յարգուէր, Քէսապ

ՀԱՅԵՐ ՀԱՆՔԻՊԻ ՀԻՒՍՆԴԱՆՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Հալէպի մէջ ինծի ծանօթ և իմ այս-
ցեւած հիւանդանոցներէն ոմանք և ա-
նոնց մէջ միջին հաշուով օգտուող Հայե-
րու թիւը կ'ուզեմ հոս ներկայացնել
յուզնելու թէ մենք իբր ժողովուրդ որ-
չափ երախտապարտ ենք այդ բոլոր
հաստատութեանց:

1. Հիւժարտաւորներու հիւանդա-
նոց որ կը կառավարուի Հալէպի քաղա-
քապետութեան կողմէ: Ասիկայ կը
գտնուի քաղաքէն դուրս, ունի 50 ան-
կողիւններ, քրոնց գրէթէ կէսը միշտ
գրաւուած կ'ըլլայ Հայ երկսեռ հիւանդ-
ներէ, որոնք ձրիօրէն կը խնամուին
հոս:

2. Ներքին հիւանդութեանց հիւան-
դանոց, դաբձեալ քաղաքապետութեան
հսկողութեան ենթակայ: Ասիկայ ու-
նի 150 անկողին: Հոս կ'ընդունուին
ծննդաբեր մայրեր, կը դարմանուին
ներքին հիւանդութիւն ունեցողներ, և
վիրաբուժական գործողութեան ենթա-
կաւածներ: Հոս ձրի կերպով կը խնամ-
ուին և կը դարմանուին 10—15 երեւմ
20 ի չափ Հայեր:

3. Քաղաքապետական անկեւանոց:

էր ան: Կիրճկի օրը աւանէն մեկնող
կամ հոն մտնող չէր գտնուիր: Կիրա-
կին հեղեղի օրը, այցելութեան օրը,
Տէրաջ օրն էր: Դիտեմ այնպիսի տու-
ներ որոնք ներքին չէին սեպեր ճաշի ա-
տեն բակը եղող ածուէն աւտելու համար
սոխ փրցնել: Աղեքսանտրէթի բոլոր
վաճառատուններուն և նաւերուն բեռ-
նակիրները թէսապցի էին, որոնք Կի-
րակի օրը բեռ չէին կրեր: Հետեւա-
բար այս նաւահանգիստը հանդիպելիք
նաւերը այնպէս կը կարգադրէին որ
Կիրակի օրը հոն չհանդիպին:

Զանյի

ՅԱԿՈԲ ՇՆՈՐՀՕՐԵԱՆ

40-50 անկողիններ կան այս հաստա-
տութեան մէջ, որ ամէն ազգէ ծերեր,
կոյրեր, խուլներ, կաթուածահարներ,
կաղեր ձրիօրէն կը հոգացուին: Ծրք
վերջին անգամ այցելեցի զայն ու թը Հա-
յեր գտայ հոն:

4. Քաղաքապետական անկուրուժա-
րանը տակաւին չկրցայ այցելել, բայց
գիտեմ որ կարգ մը Հայեր հոն ձրիօրէն
կը դարմանուին և գործողութեան կ'են-
թարկուին: Հոս կը կատարուին նաև
ձրի պատուաստում և ներարկում:

5. Սէն Ժօզէֆ Ընկերութեան հի-
ւանդանոցը ունի 50-60 անկողիններ:
Հոս կը կատարուին ներքին հիւանդու-
թեանց դարմանումներ, և վիրաբուժա-
կան գործողութիւններ: Եթէ վստահ
ըլլան թէ հիւանդը աղքատ է, կամ բու-
ւորովին ձրի կամ քիչ վարձքով կ'ըն-
դունին զայն: Այս վերջիններուն կէսը
ընդհանրապէս Հայեր կ'ըլլան:

6. «Աքսիոն Բրէթիլէն» Ընկերու-
թեան նախկին Պէթեղա և ներկայիս
«Էպէնէզէր» անհատական հիւանդանո-
ցին մէջ կ'ընդունուին ծննդաբեր մայ-
րեր, կը կատարուին վիրաբուժական
գործողութիւններ և ներքին հիւան-
դութեանց դարմանումներ: Հաստա-
տութիւնս ունի 14 անկողիններ քրոնց
կէսէն աւելին գրաւած են Հայերը:
Դարմանումները կը կատարուին կամ
յաճախ ձրիօրէն կամ չնչին վարձքով:

7. Հայ Կարմիր Քառի հիւանդանոց:
Ասոր չէնքը նոր կառուցուած է Հայ
բարեբարներու և հայասէր բարեկամնե-
րու նուիրատուութեամբը: Եւնքին
ներքին մասին յարգարումը և կահաւո-
րումը տակաւին թերի են: Հիւանդա-
նոցին դարմանատունը ամէն օր ձրիօրէն
կ'ընդունի աղքատ հիւանդներ: Հիմա
հոս կը պառկին վեց հիւանդներ և չորս
ծերեր: Կը յուսանք որ ապագային

չատ աւելի պիտի կրնայ ծառայիլ այս հիւանդանոցը:

8. Այթունեան հիւանդանոցի մէջ կան 32 անկողիններ, որոնք գրաւուած կ'ըլլան վիրաբուժական գործողութեան ենթարկուած կամ ներքին հիւանդութեան ենթակայ հիւանդներով: Հոս ալ 10—12 հայեր տեւականօրէն շատ քիչ վարձաւորութեամբ կը խնամուին: Ասկէ զատ շատ մը հայեր ձրի ամէն տեսակ բժշկական քննութեանց կ'ենթարկուին:

9. Հայ անկեւանոցը: Ասիկայ տախտակաւն սենեակ մըն է ուր ութը տարիներէ ի վեր կը խնամուին ծերացած կիներ, հայտօք բարեկամներու բարեկամութեամբը և Հայ զաւթականներու գրաւական և ուսուսէղէնի նուիրատուութեամբը: Ներկայիս 35 ծեր կիներ կան հոս:

Այս հաստատութեաններէն զատ շատ մը Հայ և օտար բժիշկներ Հայ հիւանդներուն կ'օգնեն, ձրի դարմանումի օրկրօն մէջ գտնուող քննելով և խնամելով, անոնց տունները այցելելով, անոնց վրայ ձրի վիրաբուժական գործողութեաններ ընելով: Ինչպէս անձանթ բայց Աստուծոյ ծանօթ ուրիշ շատ բարեգործներ կան:

Այս հիւանդանոցներուն մէջ իմ տեսած դէպքերէն մէկը կ'ուզեմ հոս պատմել:

Օր մը տեսայ որ հիւանդի մը առջեւ

վարագոյր մը քաշուած է. անմիջապէս հիւանդապահին հարցուցի ասոր նպատակը: «Հիւանդը աղետալ ունի», ըսաւ հիւանդապահը, «և ապաքինումը անյուսալի է»: Հասկնալով որ հիւանդը հայ է վարագոյրը քշիկ մը քաշեցի և հիւանդին նայեցայ, որ նշանով մը զիս ներս հրաւիրեց: «Արտօնութիւն կա՞յ քովը իրթալու», հարցուցի: «Ես կ'արտօնեմ, բայց հիւանդութիւնը փոխանցիկ է, քեզի մեղք կ'ըլլայ», ըսաւ հիւանդապահը: Երբ վարագոյրին միւս կողմը անցայ հիւանդը ըսաւ. «Ներայր ես պիտի մեռնիմ, արդեօք Ս. Գրքէն փրկութեան համար մը չկայ ինծի համար»: Կորսուած ոչխարի առակը կալգացի իրեն, մի քանի խօսքեր ըսի ու աղօթեցի: Հազիւ «ամէն» ըսած էի երբ տեսայ որ հիւանդը արտասուածոր կ'աղօթէր ըսելով. «հովիւս, զիս ալ ընդունէ, ես ալ մոլորեալ ոչխար մըն եմ»: Մեծ ուրախութեամբ բաժնուեցայ:

Շաբաթ մը ետքը երբ կրկին հոն գացի վարագոյրը վերցուած գտայ, և հիւանդն ալ չկար: Հիւանդապահին հարցուցի թէ արդեօք ան մեռա՞ւ: «Ապաքինեցաւ և տունը գնաց», ըսաւ հիւանդապահը: Հասցէն առի, տունը փնտռեցի և գտայ: Երբ ներս մտայ, տեսայ որ իր քրոջը հետ կ'աղօթէր ըսելով. «Ով Տէր, թէ մարմինս և թէ հոգիս բուժեցիր փառք քեզի»:

ԹՂԹԱԿԻԾ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Ինքնաշարժի ճարտարագէտները կը սենթէ՝ հինգ կամ տասը տարուան ընթացքին օթոններու կազմութեան մէջ պիտի ներմուծուին այն տեսակ փոփոխութիւններ որոնցմով կարելի պիտի ըլլայ մէկ փամուան մէջ 75 մղոն արա-

գութեամբ ընթանալ ապահով կերպով:

Գերմանիոյ մէջ հին գիրք մը կը կշռէ երկուք ու կէս թօնք. 12. 5 օտք երկայնութիւն, 4 օտք լայնք ունի: Կողքերը փայլուն տախտակէ են: Այս գիրքը աշխարհացոյց մըն է:

Այլևս պէտք չկայ քսակի մը կամ պայուսակի մը մէջ հղած ունէ առարկայ մը շոշափելով փնտռել. որովհետեւ տեսակ մը ելեկտրական քսակ հնարուած է որ հրբ բացուի ելեկտրական շող մը կ'արձակէ:

Էգուստորի մէջ նարինջի ձեւով և մեծութեամբ պտուղ մը գտնուած է որ նարինջի, գեղձի, լոլիկի և լիմոնի յատկութիւններն ունի:

Անգլիոյ Սալսպըրի կաթողիկէին մէջ 1386 ին շինուած ժամացոյց մը կար որ հինգ դար շարունակաբար գործեց և 1884 ին նոր ժամացոյց մը գրուեցաւ եկեղեցիին մէջ և հինը չգործածուեցաւ: Բայց այժմ կրկին սկսած է գործել շրտկուելէ և մաքրուելէ հաջորդ:

Փէնսիլվանիոյ համալսարանին թանգարանին մէջ եգիպտացիի մը արձանը կայ որ ասկէ 3500 տարի առաջ ապրած է և հաւանական է որ աշխարհի առաջին սղագրիչը ըլլայ:

Ատլանտեան Ովկիանոսին մէջ որսորդները արեւածուկ մը բռնեցին որ 720 հոգա կը կշռէ:

Օթօներու համար տեսակ մը անթափանց ապակի հնարուած է որ գրքէն երբ նայելու ըլլաւ օթոյին մէջ ունէ մէկը չես տեսնիր, բայց հակառակ ասոր մէջը գտնուողները կրնան զիւրութեամբ դուրսը տեսնել:

Շատ փոքր վառարան մը շինուած է որ գրպանին մէջ կը գրուի ձեռքերը տաքցնելու համար առանց բոց և կամ հոտ արձակելու: Այս գլանաձեւ վառարանը կը պարունակէ կաշտի ծծած պատրոյզ մը, զոր կարելի է վառել լուցկիով:

Մշակ մը իր արտերը մարախներէն զերծ պահելու համար ելեկտրական շարժուն ձաթոս մը գործածեց որ հրբ արտերուն մէջէն քշուեցաւ գրկներով մարախներ սպաննեց:

Մեքսիկոյի մէջ երկրախոյզները անսովոր գիււտ մը ըրին. անոնք գտած են Հովի աստուծոյ մեհեաններէն մէկը, որ Քորդէզի զինուորներուն կողմէ իրական դժոխք կոչուած էր՝ իր մէջ կատարուած ոճրագործութիւններուն համար: Ասոնք յետոյ կործանուեցան Քորդէզի զինուորներուն կողմէ:

Ամերիկայի Մ. Նահանգաց մէջ աշխարհի ամենամեծ օդանաւը շինուեցաւ, որը այս օրերս թռչելու առաջին փորձը պիտի կատարէ: Այս օդանաւը վեց ու կէս միլիոն խորանարդ ոտք ծաւալ ունի, երկայնութիւնն է 785 ոտք, և տըրամագիծը՝ 132.9 ոտք: Այդ օդանաւը որ էքթոն կը կոչուի պիտի կրնայ առաւելին 403,000 լիտր վերցնել և ժամը 84 մղոն արագութեամբ ընթանալ: Ասիկայ կրնայ 10,580 մղոն թռչիլ առանց նոր վառելանիւթ առնելու: Ունի սաւառակներու կայան մը, թռչելու ատեն զանոնք արձակելու կամ ներս առնելու համար:

Հէնրի անուհով բուսարան մը այնպիսի տեսակ մը վարդ մեծցուց որ տարուան չորս եղանակներուն մէջ ալ կը փթթի:

Տր. Ուիլի իր զանազան փորձերէն ետքը կ'եզրակայացնէ թէ՛ երկինքի խորհրդաւոր կապոյտ գոյնին պատճառն են այն անհամար ելեկտրոնները որոնք կը խուժեն արեւէն: Տր. Ուիլի իր փորձերուն մէջ կրցած է ճիշդ երկնային կապոյտին նման կապոյտ լոյս արտադրել:

ԲԱՂԵՑ՝ Հ. ՓՈՒՍՏԵԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

Հ. Բ. Ը. Միութեան Բարիգի Ընդ. Տը-
նօրհնութեան դիւանէն մեզի դրկուած Սեպ.
12 թուակիր զեկոյցեմ կը քաղենք.—

Տ. Մալէգեան ընկերակցութեամբ
Գաղթ. Կեդր. Յանձնաժողովի Ընդհ.
Քարտուղար Տ. Բաշալեանի, որ միևնոյն
ատեն Միութեան ժընէվի պատուիրակ
է, տեսակցեցաւ Յունաստանի Վարչա-
պետ Մ. Վենեզուոսի և Պուլկարիոյ
Վարչապետ Մ. Մանլիօֆի հետ: Եր-
կու վարչապետները սիրալիր ընդունե-
նելութիւն ւրին, և լսելէ վերջ Տ. Մա-
լէգեանի զեկուցումները, զոր յատուկ
նամակներով կը ներկայացնէր Միու-
թեանս մեծանուն նախագահը, խոստա-
ցան նոյն օրն իսկ հեռագրել իրենց կա-
ռավարութեանց, Աթէնք և Սոֆիա:
Պաթում մեկնելիք Յունաստանէն 5000
և Պուլկարիայէն 1000 զաղթականնե-
րուն ձրիարար չոգեհունները տրամադ-
րելու համար, աւելցնելով սակայն որ
չեն կարող ստանձնել նաև ուրիշ յարա-
կից ծախքեր:

Շոգեհունի հարցը լուծուած ըլլալով,
Վարիչ-Պատուիրակը երկիցս կարեւոր
խորհրդակցութիւններ ունեցաւ նաև,
Նանսընհան Միջազգային Պաշտօնատան
մէջ, գլխաւորաբար նախագահ Մ.
Մաքս Հիւպէրի հետ, որ, համոզուած
գոյացնելով ծրագրին կարեւորութեանը
մասին, ոգեւորութեամբ ընդգրկեց գոր-
ծը, առաջարկուած ներգաղթը նկատելով
որպէս շարունակութիւնը կամ իրական-
նացումը հանգուցեալ Տոքթ. Նանսընի
այնքան սրտեռանդօրէն հետապնդած,
բայց անյաջողութեան պատճառաւ Ազ-
գերու ժողովին կողմէ յետաձգուած մեծ
ծրագրին: Ըստ այնմ, խրախուսուե-
լով Միութեանս տրամադրութիւննե-
րէն և Նուպարաչէնի ձեռնարկէն որ
սերտօրէն կապուած է Հայաստանի

ներգաղթին, Մ. Մաքս Հիւպէր, որ
ինչպէս յայտնի է մեծ հեղինակութիւն
մըն է, հաւաստիքներ տուաւ թէ Նան-
սընհան Պաշտօնատունը ևս չի կրնար
անտարբեր գտնուիլ ներգաղթի սոյն
ձեռնարկին հանդէպ, ընդհակառակը,
որպէս գաղթականներու հարցով ըզ-
բաղուող մարդասիրական միջազգային
մարմին մը, անիկայ պիտի ջանայ ըս-
տեղծել կարելիութիւններ, թէ գաղթա-
կաններ հետզհետէ Հայաստան փոխա-
գրելու համար (մինչև Պաթում), և թէ՛
Հայաստանի մէջ անոնց տեղաւորման
անյետաձգելի գործը դիւրացնելու և
արագացնելու համար միջոցներ ապա-
հովելով: Առ այդ համաձայնութիւն
կայացած է գիմումներ կատարել օտար
բարեսիրական կազմակերպութեանց,
ձեռք բերելու համար անոնց օժանդա-
կութիւնը, ինչպէս նաև այն բարեա-
ցակամ կառավարութեանց որ խոստա-
ցած էին օգնել Տոքթ. Նանսընի, երբ
յաջողուէր հայ գաղթականները Հայաս-
տան փոխադրել:

Այդ ուղղութեամբ մի քանի պատ-
ուիրականներու հետ կատարուած ա-
ռաջին տեսակցութիւնները յոյս կը ներ-
շննեն թէ կարելի պիտի ըլլայ ապահո-
վել մէկէ աւելի մասնակցութիւններ,
թէ՛ փոխադրութեան և թէ՛ տեղաւոր-
ման ծախքերուն:

Հ. Բ. Ը. Միութիւնը տարակոյս
չունի որ ամէն Հայ, առանց խտրու-
թեան, մոռնալով իր անձուկը, իր սիր-
տըն ու քսակը պիտի բանայ այս գոր-
ծին համար, եթէ կ'ուզէ որ ազգային
տէսակէտով լուծուի գաղթական բարդ
հարցը և վերջ տրուի անգործ և անօգ-
նական գաղթականներու թշուառու-
թեան, որ վերջերս մանաւանդ հայ
խիղճը վրդովելու չափ սաստկացած է:

Հայաստանի կառավարութիւնը զըլ-
խաւորաբար պէտք ունի, յաջողապէս
և արագօրէն իրագործելու համար ներ-

գաղթը, փոխադրութեան միջոցներու (քամիոն, եւն.) և շինուածանիւթի (ատաղձ, երկաթ, եւն.): Թող ամէն Հայ իր լուսման դնէ Ներգաղթի գանձանակին մէջ:

Յունաստանէն և Պուլկարիայէն մեկնիլ ուղղորդուող ցանկերը կրնան յանձնուիլ անյապաղ Միութեան տեղական Մասնաժողովներու: Նախապէս Սուրբոյ մէջ և այլուր արձանագրուածները, և մասնաւորաբար Միութեան սաները և Հապուսցի գաղթականները, պէտք է փութացնեն իրենց նոր ցանկերը, որպէս զի Բիրէայէն մեկնելիք շոգենաւերով ճամբորդելու մասին կարգադրութիւն ըլլայ ժամանակին:

ՀԱԼԷՊԻ մէջ կազմուեցաւ մէկ երրորդ Հայ Աւետ. Ժողովական Եկեղեցի մը, ուր իբր հովիւ մէկ տարուան համար պաշտօնավարելու հրաւիրուած է Պատ. Յակոբ Զագմագճեան: Սուրբոյ Աւետ. Միութեան Հալէպի Շրջանին Վարչութեան կողմէ Պատ. Զագմագճեան արդէն պաշտօնի մը հրաւիրուած և ինքը զայն ընդունած էր: Գ. Եկեղեցիին կողմանէ եղած գրաւոր զիմումին պատասխանելով Հալէպի Շրջանին Վարչութիւնը յօժարեցաւ Պատ. Զագմագճեանը ազատ թողուլ Նոր Եկեղեցիին հրաւերը ընդունելու համար: Պատ. Զագմագճեան Սեպ. 15 ին Հալէպ ժամանած և նորակազմ Եկեղեցիին մէջ պաշտօնավարելու սկսած է: Այս երկտասարդ գործիչը բնիկ Տարսուսցի և Ս. Պօղոս Գոլէճի թերաւարտ սաներէն է, որ այս տարի աստուածաբանական ուսումը Աթէնքի Սքուլ ավարտելուն մէջ աւարտած է: Տակաւին մասնաւոր ժողովարանէ զուրկ ըլլալով հոգեւոր պաշտամունքը կը կատարուի անհատական տուններու մէջ:

ՀԱԼԷՊԻ Ամերիկեան Աղջկանց Հայ Սքուլի — որ շարունակութիւնն է Այն-

թապի և Մարաշի ամերիկեան վարժարաններուն — այս տարուան նոր վարժուհիներէն է Միս Էլէանոր Օլիֆինգ, որ եկած է Միս Պարքըրի պարապ թողուցած աթոռը գրաւելու: Միս Օլիֆինգ չըջանաւարան է Sam Houston պետական ուսուցչանոցին, և Նիւ Եորքի Գլոսպիա համալսարանին ուսուցչանոցէն (Teachers' College) ստացած է Մագիստրոս Արուեստից (M. A.) աստիճանը: ՊՐԱՅԻԼԻ Սաօ Փօլօ քաղաքին մէջ կը գտնուին 3500 հայեր, որոնք ունին երկու դպրոց՝ Հայ Առաք. 210 աշակերտներով և Հայ Բող. 60 աշակերտներով: 30 ի չափ կօշիկի հայ գործարաններ կան:

ԱԼԵՔՍԱՆԴՐԵԹԻ Հայ Առաք. Եկեղեցին դպրոցի համար գնած է 2300 քառ. մէթր գետին, ուր շինուելիք շէնքին համար 1500 օսմ ոսկի ծախք նախատեսուած է:

ԵՐԵՒԱՆ, Հայաստանի Մայրաքաղաքը, մինչեւ յառաջիկայ Նոյ. 29 պիտի հռչակուի «համատարած գրագիտութեան քաղաք»:

ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐՈՒՆ թիւն է 13633 կառավարական վիճակագրութեան համեմատ, ասոնցմէ զատ կան մի քանի հազար հայեր թրքահայատակներու ցանկին մէջ:

ՍՏԱՅԱՆՔ

ԱՆԱՀԻՏ. հանդէս մտածման և Արուեստի, Գ. տարի թիւ 1—2. կը հրատարակուի երկու ամիսը անգամ մը: Տարեկան բաժնեգրինն է Սուրբոյ և Ֆրանսայի համար 100 ֆրանք, օտար երկիրներու համար հինգ տոլար:

9, Rue Say, Paris

صاحب الامتياز والمدير المسؤول

القس ق. هاروتونيان